Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 07

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<30>> ապրիլի 2024թ. ք. Երևան

2024 թվականի ապրիլի 30-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էին հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր(ներ) տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային

սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝

«ԴԱՎ 222» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2024 թվականի ապրիլի 16-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան փողոց 100 գործունեության վայրում:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2024 թվականի ապրիլի 16-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան փողոց 100 գործունեության վայրում:

Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամ Ա. Խաչատրյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԴԱՎ 222» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

Քննարկվեց՝ «ԴԱՎ 222» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2024 թվականի ապրիլի 16-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2024 թվականի ապրիլի 16-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան փողոց 100/3 գործունեության վայրում:

Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրությունն իրականացվել է Լիցենզավորման հանձնաժողովի անդամ Ա. Խաչատրյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԴԱՎ 222» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն և 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան